

ΙΩΑΝΝΟΥ ΤΟΥ ΣΚΥΛΙΤΖΗ
ΣΥΝΟΨΙΣ ΙΣΤΟΡΙΩΝ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍԿԻԼԻՑԵՍ
ՀԱՄԱՌՈՏՈՒԹՅՈՒՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆՑ

ՀԱՄԱՌՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՊԱՏՄՈՒԹՅԱՆՑ՝ ՍԿՅԱԼ ՆԱԽԿԻՆՈՒՄ
ԳԵՆԵԿՈՒՆԻՒՄ [ՊԱՇՏՈՆԵՐ ՎԱՐԱԾ] ՆԻԿԵՓՈՐ ԿԱՅՍԵՐ՝
ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆՆԻՑ ՄԻՆՁԵՎ ԽՍԱՀԱԿ ԿՈՄՆԵՆՈՍԻ
ԹԱԳԱՎՈՐԵԼԸ, ՇԱՐԱԳՐՅԱԼ ՆԱԽԿԻՆՈՒՄ ՎԻԳԼԱՅԻ ՄԵԾ
ԴՐՈՒՆԳԱՐԻՔ [ՊԱՇՏՈՆԵՐ ՎԱՐԱԾ] ԿՈՒՐԱՊԱՂԱՏ
ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍԿԻԼԻՑԵՍԻՑ

Պատմության համառոտությունը հենրից հետո գերազանց կատարեցին նախ Գեորգիոս Վանականը⁵, որ սրբազնագույն պատրիարք Տարասիոսի⁶ սինկելլոսի⁷ [պաշտոնը] վարեց, իսկ նրանից հետո Ագրոսի վանահայր Թեոփանես խոստովանողը⁸: Նրանք ամենայն բարեխղճությամբ հետազոտելով պատմական գրքերը, պարզ ու հասարակ ոճով համառոտեցին, առանց խորանալու տեղի ունեցած դեպքերի էություն մեջ: Նրանցից Գեորգիոսը [իր շարադրանքն] սկսելով աշխարհի արարչագործությունից, այն հասցրեց մինչև բռնակալները, ես նկատի ունեմ Մաքսիմիանոսին և նրա որդի Մաքսիմիանոսին⁹: Իսկ Թեոփանեսը նրա [շարադրանքի] վերջն իր համար սկիզբ անելով, համառոտեց մնացած ժամանակագրությունը, հասցնելով [մինչև] նախկինում գենիկոնի [պաշտոնը վարած] Նիկեփոր կայսեր վախճանը: Նրանից հետո ոչ ոք չնվիրվեց նման գործի: [Ծիշտ է], ոմանք փորձե՞ր արեցին, ինչպես, օրինակ, վարդապետ Սիկիլիացին¹⁰, մեր ժամանակակից՝ փիլիսոփաների հյուպատոս և հյուպերտիմոս Պսելլոսը¹¹ և ուրիշներ, բայց նրանք գործին ի միջի այլոց լծվեցին, բազում կարևոր [հարցեր] շրջանցելով, ճշմարտության դեմ մեղանշեցին, հաջորդներին էլ օգուտ չտվեցին, [քանզի] սոսկ կայսրերին թվեցին, ցույց տվեցին, թե ով ումից հետո տիրացավ գայիսոսին, և ոչինչ ավելի: Եվ եթե անգամ թվում է նրանք կանգ են առել այս կամ այն դեպքի վրա, այդ էլ մակերեսայնորեն գրի առած լինելով, ավելի վնասեցին, քան օգուտ տվեցին: Թեոդորոս Դափնոպատեսը, Նիկետաս Պափլագոնացին, բյուզանդացիներ Հովսեփ Գենեսիոսն ու Մանուիլը, վույուգիացի Նիկեփոր Սարկավազը, ասիացի Լևոնը, Սիդեի եպիսկոպոս եղած Թեոդորոսն ու նրա համանուն զարմիկը, որ Սեբաստիայի եկեղեցու առաջնորդը եղավ, այնուհետև

կյուզիկոսի [եպիսկոպոս] Դեմետրիոսը, վանական Հովհաննես Լյուդացին¹², յուրաքանչյուրն իր առջև անձնական նպատակ դնելով, մեկը, ասենք, կայսեր ներքողյան [գրեց], մյուսը՝ պատրիարքի պարսավագիր, երրորդը՝ բարեկամի գովք, ամեն մեկը պատմության զգեստի մեջ սեփական դիտավորություն դնելով, հեռացան հիշյալ աստվածակիր այրերի սկզբունքներից: Իրենց ապրած ժամանակի դեպքերը երկար բարակ [շարադրելով], մի քիչ էլ վերից սկսելով, [գրածին] պատմության ձև տալով, մեկը՝ համակրությամբ, մյուսը՝ հակակրությամբ, երրորդը՝ հաճոյանալու համար, մի ուրիշն էլ որևէ մեկի կարգադրությամբ, յուրաքանչյուրն իր պատմությունը շարահարեց, որոնք միևնույն հարցերում իրարից տարբերվելով, ունկնդիրներին գցեցին շփոթության ու տարակուսանքի մեջ: Իսկ մենք հավանություն տալով հիշյալ այրերի¹³ ցանքին, հույս ունենք, որ [սույն] համառոտությունը պատմությունն սիրողներին շատ օգտակար կլինի, հատկապես նրանց, ովքեր գերադասում են դյուր[ընկալելին] դժվար[ընկալելիից], այն կտա համառոտ, ավելորդություններից բեռնաթափված պատկերը տարբեր ժամանակներում տեղի ունեցած դեպքերի: Մենք վերցրինք վերոհիշյալ հեղինակների արժանահավատ պատմությունները, մի կողմ թողնելով այն, ինչ նրանց մոտ ասված է աչառությամբ կամ հաճոյանալու միտումով, շրջանցեցինք անհամաձայնություններն ու հակասությունները, հրաժարվեցինք այն ամենից, ինչ առասպելապատում համարեցինք, հավաքեցինք արժանահավատը և վստահելին: Դրա վրա ավելացրինք այն, ինչ բանավոր իմացանք տարեց մարդկանցից: Այդ բոլորի համառոտությունը տալով, մենք հաջորդ սերունդներին թողեցինք փափուկ, ինչպես ասում են՝ աղացած սնունդ, որպեսզի վերոհիշյալ պատմիչների գրքերի ընթերցողները ի դեմս այս գրքի [փաստերը] ստուգելու հնարավորություն ունենան, իրենց համար ուղեկից, հետևեն նրան, քանզի ընթերցումը հուշեր է առաջացնում, հուշերը սնում և ընդարձակում են հիշողությունը, իսկ անհոգությունն ու անփութությունը, ընդհակառակը, բթացնում են հիշողությունը, դրան հետևում է տեղի ունեցած իրադարձությունների մասին հիշողությունը մթագնող և շփոթող մոռացությունը: Իսկ նրանց համար, ովքեր ձեռքի տակ չեն ունենա պատմական [հիշյալ գրքերը], այս համառոտությունը ուղեցույց կլինի և հետազոտելով ավելի ընդարձակապատում շարադրանքները, իրադարձությունների մասին ավելի կատարյալ տեղեկություններ կստանան...¹⁴